

Слава!

Императорский Институт

621
8.50

1840

ԹԱԴԻՈՖՐՈՆՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ


30 JUL 2010

621
7-50

ար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐՈՂ ԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԻՉ
ԱՆՏԵՆՆԱՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՄՈՎԵՏԻՆ ԿԻՑ Ո-ԱԴԻ-ՇԱԿՈՄՄԵՏԵ

ԵՐԵՎԱՆ

1940

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լավագույն աճտեննա-լավագույն ընդունում	էջ
2. Հաղորդումների ընդունման աճտեննաների տիպեր	1
3. Աճտեննայի աշխատանքը	5
4. Աճտեննայի տիպի ընտրությունը	10
5. Աճտեննայի դրումը	14
6. Հողակցման սարքավորումը	18
7. Կայմի սարքավորումը	20
8. Պահպանումը ամպրոպից	23



2260
Կ1

1. ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՆՏԵՆՆԱՆ - ԼԱՎԱԳՈՒՅՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ


Անտեննայի որակից կախում ունի ընդունման որակը - լավագույն անտեննան պետք է տա լավագույն ընդունում:

Պարզ և փոքր զգայնություն ունեցող ընդունմիչների համար լավ անտեննան անհրաժեշտ է: Բարձր զգայնություն ունեցող ընդունմիչները կարող են աշխատել անտեննային փոխարինող հաղորդալարի մի փոքր կտորով, կամ նույնիսկ առանց անտեննայի:

Ներկա բրոշյուրի խնդիրն է գաղափար տալ ուղիո-հաղորդումների ընդունման համար ներկայումս կիրառվող անտեննաների մասին, պարզել այն հարցը, թե ովայլ ընդունիչի համար ովայլ պայմաններում որ անտեննան է ամենալավը և ընթերցողին ծանոթացնել անտեննայի և հողակցման գործնական կառուցգածքին:

2. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՏԵՆՆԱՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Հնդունող անտեննաների հիմնական տիպն արտաքին անտեննան է, որը դառնում են ուղիո ընդունիչի գտնված շինությունից դուրս: Արտաքին անտեննաների բազմաթիվ տեսակներից ամենից ավելի պատվաստվել է անտեննաների Ռ—ձև տիպը (նկ. 1): Այս սիրողական լավագույն անտեննան է: Այս բաղկացած է երկու հիմնական մասից՝ հորիզոնական մասից և իջեցումից: Ռ—ձև անտեննան ամրացվում է երկու կայմերի վրա և այսպիսով ունի կախման երկու կետ:




Նկ. 1 Ռ—ձև անտեննա - սիրողական լավագույն անտեննան

Գոյություն ունեն նաև կախմանք մեկ կետ ունեցող անտեննաներ: Այդպիսի անտեննաներն ավելի էժան արժեն և ավելի հեշտ են դրվում, քան լ—ձև անտեննան: Անտեննաների նման տիպին են պատկանում:


Ուղղաձիգ անտեննան (նկ. 2), որը բաղկացած է մեկ ուղղաձիգ կամ թեք հաղորդալարից (իչեցումից):

Կենտրոնացված ունակությամբ անտեննան (նկ. 3), որը բաղկացած է հաղորդալարերի սիստեմից, որոնք, տեղափորված են լինելի մասում և ունեն զարգացողի, սպիրալի (շրջանակի), փոխ-ուղղահայաց շրջանների, մետաղա սնամեջ գնդի կամ ավելի ձև: Հաղորդալարերի այս սիստեմից ներքեւ է գնում իշեցումը՝ մի ուղղաձիգ կամ թեք հաղորդալար:

Անտեննաների թված տիպերը, հատուկ հակառակային անտեննաներից տարբերելու համար, կարելի է անվանել պարզ արտաքին անտեննաներ:



նկ. 2 ուղղաձիգ անտեննա



նկ. 3 կենտրոնացված ունակությամբ անտեննաների տեսակները

Դոյություն ունեն նաև ներքին անտեննաներ, որոնց կարելի է ստորաբաժանել սենյակային անտեննաների և համեմատաբար հազվադեպ կիրառվող ձեղնահարկային (չերդակային) անտեննաների:

Ձեղնահարկային անտեննաներն կախում են միայն որոշ մետաղային կտուրների տակ, նրանք սովորաբար իրենցից ներկայացնում են լ—ձև անտեննաներ, որոնց ունակությունը մեծացնելու համար հորիզոնական մասը երկու մետաղարերից են անում, զիգզագաձև են կախում:


Վերջին ժամանակները մեծ տարածում են ստացել սենյակային անտեննաները: Այդ անտեննաները բազմապիսի ձև ունեն: Սակայն ամենից ավելի ուսցիունալը լ—ձև անտեննան է, որը կախվում է սենյակի երկու պատերի երկայնքով (նկ. 4):

Հատկապես պետք է խոսել հակառակային անտեննաների մասին, որոնք երեվան եկան վերջին ժամանակները և այժմ ավելի ու ավելի մեծ տարածում են առանում: Նրանց հիմնական ինդիքն է պակասացնել այն խանգարումները (ճարճատյունները), որոնք դիմում են ընդունիչի աշխա-


տանքի ժամանակ և ընդունման ակտին մոտ գտնվող զանազան էլեկտրական սարքերի աշխատանքի հետեւանք են: Այդպիսի խանգարումները կոչվում են արդյունաբերական խանգարումներ:

Հակառակմկային անտեննաները — բացառապես արտաքին անտեննաներ են: Հստ կոնստրուկցիայի նրանց կարելի է ստորաբաժանել էկրանված իշեցումով անտեննաների և երկարորդալարացին իշեցումով անտեննաների:

Ընդունիչի նորմալ աշխատանքի համար, բացի անտեննայից անհրաժեշտ է նաև հողակցումը: Սակայն գոյություն ունեն այնպիսի անտեննաներ, որոնք աշխատում են առանց հողակցման: Այդպիսին է դիպոլային անտեննան (դուբլերը), որը բաղկացած է մի հորիզոնական հաղորդալարից: Այդ հաղորդալարը սովորաբար մեջտեղովով բաժանվում է մեկուսիչով, որի հետեւանքով ստացվում են անտեննայի երկու «բիչեր»: Երկու բիչերից դեպի ընդունիչը է գնում երկարորդալարային իշեցումը (նկ. 5): Այդպիսի տեսքով դիպոլային անտեննան կիրառվում է որպես հակառակմկային անտեննա:



նկ. 4 լ—ձև սենյակային անտեննա



նկ. 5 դիպոլային անտեննա
(դուբլեր)

3. ԱՆՏԵՆՆԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Անտեննան տարածությունից ուղիղ ալիքներ 'օդրապետա' նպատակին է ծառայում: Ուստի բնական կիխի մտածել, որ ոդրան վերեվ է բարձրանում անտեննան, այնքան ավելի ուժեղ կիխի ընդունումը: Անտեննայի աշխատանքի մասին այսպիսի պատկերացումը հիմնականում ճիշտ է: Սակայն մի բարձրություն անտեննայի համար օգտակար չե: Բայն այն է, որ անտեննային շրջապատող շինությունները, անտառը և ամեն տեսակի բարձրությունները ընդունող ուղիղ կայանի դաշտի լարվածությունն անտեննայի մոտ թուլացնում են և դրանքով իսկ իշեցնում են ընդունման ուժեղությունը:

Եթե դաշտի այդ լարվածությունը չափենք բարձրահարկ տան մեջ, ապա տանիքի մերեվում դաշտի ունեցած լարվածության հետ համեմատած այն առվելի փոքր կլիմի, իսկ դեպի ներքեւ, հարկից հարկ կնվազի, և նկուղային հարկում հասանի տանիքի մերեվում դաշտից ունեցած լարվածության միայն 3—5 տոկոսին:


Երկրի մակերեւութից բարձր առարկաները կարծիք թէ բարձրացնում են երկրի մակարդակը և զրանով իսկ իշեցնում են անտեննայի գործող բարձրությունը։ Այսպես, օրինակ, տան վրա դրված բարձր անտեննան, և զգալիորեն ցածր դրված, բայց բաց տեղում զոնվոր անտեննան կարող են իրենց տված ընդունման ուժով հավասար արժեքի, լինել:

Այսպիսով, անտեննայի բարձրությունն ընտրելիս պետք է հաշվի առնել, այն, թէ անտեննան գոնվում է արդյո՞ք բաց վայրում և նրա գործողությունն արդյո՞ք չի թուանում շրջապատող առարկաներով։

Սակայն, չպետք է մտածել, որ շատ բարձր անտեննան միշտ լավ հատկություններ կունենա։ Անտեննայի բարձրությունը չափից ավելի մեծացնելիս երեվան կգան ուժեղ ճարճատյուններ և աղմուկներ, որոնց առաջացնում են մթնոլորտային էլեկտրական երեվութները (այսպես կոչված մթնոլորտային խանգարումներ)։

Քաղաքներում, որոնք հագեցված են ամեն տեսակի էլեկտրական սարքավորումներով— մոտոռներով, զանգերով հեռախոսներով, ունտգենյան տպարատներով, արամվայներով և այլն, ուղիղորնդուման ուժեղ կերպով խանգարում են ընդունիչում զգացվող ճարճատյուններն ու աղմուկները, որոնք առաջանում են իրենց աշխատանքի ժամանակ բարձր հաճախական տատանումների ճառագայթող էլեկտրական սարքավորումների աշխատանքի հետեւանքով։

6-րդ նկարի վրա ցույց է տրված այն էլեկտրոռամաքնիսական դաշտի օրինակային բաշխումը, որն առաջանում է էլեկտրոֆիլուսիայի ենթարկված փոքր խանգարումների աղբյուրների կողմից։ Նկարից երեվում է, որ անտեն-




Նկ. 6 «Արդյունաբերական» խանգարումների դաշտի բաղասամբ էլեկտրոֆիլուսիայի ենթարկված փոքր տանը։

նայի իշեցման ներքեվի մասը գոնվում է խանգարումների դաշտում, ուստի ընդունիչի մեջ ամեն տեսակի էլեկտրական սարքավորման աշխատանքի գեպքում անխուսափելու կատացվի ճարճատյուն և աղմուկ։


Արդյունաբերական խանգարումների դեմ պայքարի ամենաարմատական եղանակը այդ խանգարումների անմիջական ոչնչացումն է այն դեպքում, որտեղ նրանք առաջանում են։ Այդ նպատակով խանգարումներ առաջացնող էլեկտրական սարքավորման կցում են պահպանիչ սարքավորում, որը սովորաբ բաղկացած է հաստատում կոնդենսատորներից, դրուելներից և դիմադրություններից։ Բայց և այնպես այդպիսի միջոցառումների իրականացումը մեծ դժվարությունների է հանդիպում։ Հսկայական քանակությամբ ամեն տեսակի էլեկտրական սարքավորումների ըլովադան (մեկուսացումը) պահանջում է մեծ աշխատանք և զրամական ու նյութական խոշոր միջոցների ծախսում։ Այդպիսի աշխատանքը լիովին կարող է իրականացվել միայն աստիճանաբար մի քանի տարվա ընթացքում։

Հակաաղմկային անտեննաները, որոնք նախատեսված են արդյունաբերական խանգարումների դեմ պայքարելու համար, թույլ են տալիս զգալիուն թուլացնել խանգարումների աղմեցությունը ուղղիկայաններն ընդունելիս։

7-րդ նկարի վրա ակնառու կերպով ցույց էն տրված անտեննայի աշխատանքի պայմանները, եթե այն գոնվում է ընդունվող կայանների էլեկտրո-



Նկ. 7 անտեննայի աշխատանքի պայմանները՝ անտեննայի վերջի մասն ընդունում է աղմանշանը (ռազիկուայանի հաղորդումը), նրա ներքեւ մասն ընդունում է խանգարումները (էլեկտրոֆիլուսիայի ենթարկված տան դեպքում), երկաթե կտուրը էլեկտրում է խանգարումները։



Նկ. 8 իշեցման էլեկտրումը՝ նրա պահպանումը խանգարումների դաշտի ներգործությունից։

մագնիսական դաշտում (որը ցույց է տրված կետագծային գծերով) և խանգարումների առաջացրած դաշտում։

ին անտեննաներում. որոշ սխառհմներում կիրառվում է միայն ելքի տրանսֆորմատոր:

Հակաաղմկային անտեննաների հետ միասին, խանգարումների ամենաշատ վերացման համար, հանձնարարվում է կիրառել ցանցային ֆիլտրը. որի սինեման ու տվյալները բերված են 10-րդ նկարի վրա: Առանց այդպիսի ֆիլտրի հակաաղմկային անտեննայի գործողությունը կարող է անբավարար լինել:

4. ԱՆՏԵՆՆԱՅԻ ՏԻՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ՝ փորձենք պարզել, թե երբ ամենից ավելի նպատակահարմար է կիրառել այս կամ այն անտեննան, այսինքն որոշակի պայմաններում որ անտեննան ավելի լավ կաշխատի:

Պարզ արտաքին անտեննան. պարզ արտաքին անտեննան — և մասնավորպես Շ-ձև անտեննան — ամենաշատ ցանկալի անտեննան է բոլոր գեպքերում: Այդ տիպի անտեննան հատկապես պիտանի է փոքր զգայնություն ունեցող ընդունիչների համար — դեռևս կտորային և պարզ լամպային ընդունիչների համար:

Պարզ արտաքին անտեննան լավ արդյունքներ կտա նաև ավելի զգայում ընդունիչներում, օրինակ սուպերներում: Քանի որ ժամանակակից ընդունիչները ուժեղության ավտոմատիկ կարգավորում ունեն (*ՈՒԱԿ*), ապա ազդանշանի լարման հավելուրդի դեպքում, որն անտեննան տալիս է բարձրալի կայանն ընդունելիս, *ՈՒԱԿ*-ն ավտոմատիկորեն իշեցնում է ընդունիչի զգայունությունը և այն կաշխատի նորմալի իմակ թույլ աազդանշանների դեպքում, այսինքն հազորուղ կայանի ստեղծած թույլ դաշտի և մթնոլորտային խանգարումների տեսակետից բարենպաստ պայմանների դեպքում, միայն լավ, համեմատաբար բարձր, արտաքին անտեննան ավելի լավ ընդունում կտա:

Բայց ժամանակակից զգայուն ընդունիչը գործածելիս պարզ անտեննան լավ կաշխատի միայն այն դեպքում, եթե այն չի ստուգում արդյունաբերական խանգարումների դաշտում:

Մարտկոցներով աշխատող ընդունիչների համար ցանկալի է միայն արտաքին անտեննան, որովհետև մարտկոցային ընդունիչները հարկ է լինում կիրառել գերազանցապես այնտեղ, որտեղ չկա էլեկտրոցանց և նրա շետ կապված տարբեր էլեկտրոսարքերի առաջացրած խանգարումները: Բայց երբեմն մարտկոցային ընդունիչներ դրվում են այնպիսի տեղերում, որտեղ կա հաստատուն հոսանքի ցանց և հետեւարար, կարող են խանգարումներ լինել: Այս դեպքում օգտակար է համոզվել, որ ընդունիչը հաստատման տեղի մոտակայքում չկա էլեկտրոսարքուներ ունեցող արհեստանոց, ոհնտքենյան կաթինետ և այլն:

Արդյունաբերական խանգարումների աղբյուրի առկայության դեպքում

ուկտը և կշռողաւոել հետեւալ երկու հանգամանքները՝ որքան է շինության բարձրությունը (քանի հարկ է) և որ հարկում պետք է դրվի ընդունիչը:

Եթե շենքը բազմահարկ է, իսկ ընդունիչը դրվում է ներքեւի հարկերից մեկում — և բացի այդ արդյունաբերական խանգարումներ կան, ապա պետք է նախընտրել հակաաղմկային անտեննան:

Եթե շենքը միհարկանի է, կամ ընդունիչը դրվում է բազմահարկ տան վերևի հարկում, ապա հակաաղմկային անտեննան նկատելի է փեկտ չի տա և, հետեւար, ավելի լավ կլինի սովորական անտեննա դնել:

Բազմահարկ տան դեպքում կարելի է խանգարումների զգալի թուլացում ստանալ, եթե իշեցումը տարվի պատերից 1—2 մետր հեռավորության վրա: Երկաթի տանիքի առկայության դեպքում կարելի է փորձել նրա էկրանող հատկության օգտագործելը, անտեննան դնելով կտուրի երկայնությամբ:

Եյդ բնույթի միջոցառումներ պետք է կիրառել արդյունաբերական խանգարումների դեպքում, հատկապես ոչ բարձր զգայնություն ունեցող ընդունիչների համար, քանի որ փոքր զգայնություն ունեցող ընդունիչների դեպքում հակաաղմկային անտեննայի կիրառության հնարավորությունը բացականացած է:

ԿԱԽՄԱՆ ԵՐԿՈՒ ԵՎ ՄԵԿ ԿԵՏՈՎ ԱՆՏԵՆՆԱ ԵՐԲ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԱՆՏԵՆՆԱՆ ԵՐԿՈՒ ԿԵՏԻՑ ԱԿԱԽԵԼՈՒ, ԱՊԱ ՊԵՏՔ Է ՆԱԽԱՐԱՄՆԵՐԵԼ Գ- ՁԵԱ ԱՆ- ՏԵՆՆԱՆ, ՀԱՄԿԱՎԵՍ ԻՓՈՔՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵցող ընդունիչների ԴԵՊՔՈՒՄ:

Դետեկտորային ընդունիչի համար լավ կլինի 40—50 մետր ընդհանուր երկարություն ունեցող հաղորդալարով անտեննան. այդ հաղորդալարից 30—40 մետրը գնում է հորիզոնական մասին, իսկ մնացածը՝ իշեցման վրա: Եթե ընդունիչը դրվում է մեծ տան ներքեւի հարկում, ապա հաղորդալարի ընդհանուր երկարությունը կարելի է մեծացնել, ճգտելով հորիզոնական մասը թողնել 30 մետր: Հորիզոնական մասը հաստատվում է կտուրից 4—6 մետր բարձրության վրա: Այս դեպքում կարելի է շատ լավ արդյունքներ սպասել դետեկտորի վրա ընդունելիս, նույնիսկ մեծ քաղաքում:

Լամպային ընդունիչների համար լավ կլինի ավելի կարճ անտեննան 20—30 մետր ընդհանուր երկարություն ունեցող հաղորդալարով, որից հորիզոնական մասի համար պետք է թողնել 10—20 մետր. կտուրի վերևում կախման բարձրությունը վերցվում է 3—4 մետր:

Կախման մեկ կետով արտաքին անտեննան ավելի վատ է, քան Գ- ՁԵ անտեննան: Այդպիսի անտեննան հորիզոնական հաղորդալար չունի և այդ պատճառով զրկվում է լարման այն մասից, որը նրա մեջ ինդուկտվում է: Քանի որ կենտրոնացված ունակությունը (եթե այն ունի տվյալ անտեննան) սովորաբար փոքր է Գ- ՁԵ անտեննայի հորիզոնական մասի ունակությունից, ապա մեկ կախման կետ ունեցող անտեննայի պորժող բարձրությունը փոքր է Գ- ՁԵ անտեննայի գործող բարձրությունից:

Սակայն երբ տեղային պայմանները բարեկանան դնելու հնարավորություն չեն տալիս, ապա հարկ է լինում կախման մեկ կետով անտեսնա կիրառել և հաշտվել նրա աշխատանքի որոշ վատ արդյունքների հետ:

Համպային ընդունիչի համար բավարար արդյունքներ կարող է տալ պարզ ուղղաձիգ անտեսնան: Այս շատ հեշտ կարելի է իրականացնել: Դրա համար բամբակի (կամ որևէ այլ) թեթև ձողը, Յ-ա մետր երկարությամբ, ամրացնում են ծխնելուցին, ձողի ծայրին ամրացվում է մեկուսացած հաղորդալար: Հաղորդալարը կարելի է վերևու ներքև սպիրալաձև փաթաթել ձողի շուրջը: Նրան մի քանի տեղում կապել ձողի հետ:

Պարզ ընդունիչների դեպքում պետք է բոլոր միջոցներով մեծացնել ուղղաձիգ անտեսնայի կենտրոնացված ունակությունը, պատրաստելով զամուցուղներ, շրջանակներ և այլն: Այսպես կոչված ավելացին անտեսնան, որով մի ժամանակ տարվեցին ուղիղ սիրողները, բավականին միջակ անտեսնա դուրս եկավ: Անհրաժեշտ է հիշել, որ ունակության շատ մեծացում ստացվում է միայն անտեսնայի հաղորդալարերն իրարից հնարավորության շափակեմ հեռավորության վրա ցրելիս:

Սենյակային աճտենեան. սենյակային անտեսնան արտաքինից վատ է, քանի որ նրա գործող բարձրությունն աննշան է: Սակայն, ոչ միշտ հնարավոր է տանիքի վրա արտաքին անտեսնա դնել:

Դետեկտորային ընդունիչով ընդունելիս սենյակային անտեսնաները տալիս են տեղական կայանի ըստ բարձրության միայն համեստ ընդունում:

Ուղղակի ուժեղացման պարզ ընդունիչների դեպքում սենյակային անտեսնան բարենպաստ պայմաններում կարող է տալ ոչ միայն տեղական, այլ և հեռավոր ընդունում:

Բարձր զգայնություն ունեցող ընդունիչները՝ ինչպես ուղղակի ուժեղացման, այնպես և առաքելուները, սենյակային անտեսնայով ոչ վատ ընդունում են տալիս, ընդորում երկար ալիքներով ընդունումը որոշ շափով վատ կիրար քան միշին ալիքներով:

Խանգարումները թուլացնելու իմաստով, ինչպես դժվար չեն եղանակացնել վերև ասածից, սենյակային անտեսնան առանձնապես լավ արդյունքներ շիտալիս, եթե խանգարումների աղբյուրները նույն տանն են գտնվում, քանի որ այս դեպքում այն գտնվում է ազդանշանի թուլացման դաշտում և խանգարումների ուժեղ դաշտում:

Հակառակը, եթե խանգարումների աղբյուրը գտնվում է տնից դուրս (օրինակ տրամվայը, տրոլեյբուսը, հարեւան գործարանի էլեկտրոսարքավորումը և այլն), ապա սենյակային անտեսնայի դեպքում, արտաքին անտեսնայի համեմատությամբ, խանգարումները կարող են թուլացվել:

Եթե սենյակային անտեսնան համեմատենք այն արտաքին անտեսնայի հետ, որը միացված է, օրինակ, ներքեվի հարկում դրված ընդունիչի հետ, ապա այդպիսի անտեսնան, ազդանշան— խանգարում հարաբերություններով ավելի լավ չի լինի, քան սենյակային անտեսնան, քանի որ երկար իշեցումների դեպքում ստացվում է խանգարումների դաշտի մեծ լարում. իսկ

տպանշանի մակարդակի բարձրացումը երկար իշեցման հաշվին համեմատաբար փոքր կլինի:

Սենյակային անտեսնան օգտագործելիս արդյունաբերական խանգարումները նվազեցնելու համար օգտակար է կիրառել ցանցային ֆիլտրը (նկ. 10):

Թուլ խանգարումների պայմաններում սենյակային անտեսնան զգայում ընդունիչներով և սուպերհետերոդիններով շատ լավ արդյունք է տալիս հեռավոր ընդունման իմաստով:


Հակաաղմկային անտեսնաները, ինչպես վերև արդեն ասվեց, միայն արդյունաբերական բնույթի խանգարումների թուլացում են տալիս: Այդ տիպի անտեսնաներից ավելի շպետք է պահանջել. մինուլորտային խանգարումները նրանք վերացնել չեն կարող:

Դետեկտորային ընդունիչով ընդունելու համար հակաաղմկային անտեսնաները քիչ են պիտանի, քանի որ նրանց մեջ կան կորուսի աղբյուրներ— տրանսֆորմատորներ և բարձր հաճախականության ազդանշանի հաղորդման երկհաղորդալարային գիծ (ֆեդեր):

Հակաաղմկային անտեսնան ամենից ավելի պիտանի է սուպերհետերոդինային ընդունիչների և ուղղակի ուժեղացման բարձր զգայնություն ունեցող ընդունիչների համար:

Հակաաղմկային անտեսնաները՝ արտաքին անտեսնաներ են: Այսպիսով, եթե արտաքին անտեսնա դնելու հնարավորություն չկա, ապա հարկ է լինում հրաժարվել հակաաղմկային անտեսնայից և սարքավորել սենյակային անտեսնա:

Սուրբովատային անտեսնեաներ. լուսավորության ցանցը անտեսնայի, ամենապարզ և համար փոխարինողն է, այն կարող է տալ բավական լավ ընդունում, որն իր որակով մոտենում է նորմալ արտաքին անտեսնայով ընդունման:



Նկ. 11 ընդունումը լուսավորության ցանցով կատարվում է միայն բաշխիչ կոնդենսատորի միջոցով

Սակայն պետք է հաշվի առնել, որ արդյունաբերական խանգարումների առկայության դեպքում ցանցը կարծեր թե այդ խանգարումների կրողն է

Հանդիսանում: Այդ խանգարումները ցանցային գիտորով վերացնել չի կորելի, քանի որ այդ դեպքով խանգարումների հետ միասին վերանում է և ինքն ընդունումը: Ուստի տեղային մեծ խանգարումների առկայության դեպքով ցանցի հետ համեմատած լավագույն արդյունքներ կտա սենյակային անտեսնան:

Հուսավորության ցանցի վրա ընդունելիս ընդունիչի անտեսնային սեղմակը միացվում է ցանցի հաղորդալարերից մեկին անպայման բաշխիչ կոնդենսատորի միջոցով (նկ. 11): Ընդունիչը ցանցին անմիջականորեն միացնել է ի կարելի, քանի որ այդ դեպքում ցանցը հողի հետ կարճափակում կտա: Բաշխիչ կոնդենսատորը վերցվում է 300-ից մինչև 500 մանտիմետր ունակությամբ: Այն ժաման համար փորձարկելիս պետք է դիմանա ոչ պակաս քան ցանցի կրկնապատկած լարման: Այդ նպատակով կարելի է կիրառել վաճառքում գոնովով «ԵԲ» տիպի 800—1000 ոլտ ժաման լարում ունեցող կոնդենսատորներ:

Երկաթե տանիքը, եթե այն չի հողակցված (օրինակ Հրդեհային սանդուխով, որն իշնում է մինչև հողին) և չի գտնվում մեծ խանգարումների դաշտում, կարող է բավականին լավ անտեսնա լինել:

Այդպիսի անտեսնայի վրա երեխն կարելի է ստանալ հետավոր ընդունում նույնիսկ դետեկտորային ընդունիչով: Բայց ի հարկ է, որևէ նույնիսկ ամենահասարակ անտեսնան, որը կախված է նույն տանիքի վրա դրված կայմից կտա ավելի լավ ընդունում:

Տանիքը որպես նաեւ անտեսնա օգտագործելիս նրան զոդում են իբրև իշեցում ծառայող հաղորդալարի մաքրված ծայրը: Այս դեպքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել կոնտակտի որակի վրա: Վատ կատարված կոնտակտի դեպքում միացման տեղման արագ օքսիդանում է, որի հետեւ քովով ընդունման բարձրությունը ընկնում է և առաջ են գալիս ճարճատյուններ ու աղմուկ:

Իշեցման հաղորդալարը ամենից լավ կլինի զոդել երկաթե թերթիկներից մեկի հետ կամ, նախապես մաքրելով այն, զնել բոլտի բացվածքի մեջ և նրա գայկայի տակ սեղմել իշեցման հաղորդալարը: Դրանից հետո բոլորը, թիթեղի մաքրված մասը և հաղորդալարի ծայրը ծածկում են ներկի հաստ շերտով: Իշեցումը ձգվում է տանիքի եզրից ցած և, ինչպես սովորաբար, ներս է տարվում պատուհանից:


5. ԱՆՏԵՆՆԱՅԻ ԴՐՈՒՄԸ

Արտաքին անտեսնա.— Արտաքին անտեսնայի համար իբրև նյութ ժառյում է մեկ պղնձի կամ երկաթի ցինկապատված ձոպանիկը ոչ պակաս 1,5—2,5 քառ. մ. մ. արամագծով: Ավելի բարակ ձոպաններով կամ հաղորդալարով չպետք է օգտվել, քանի որ այդ դեպքում անտեսնան բավարար մեխանիկական ամրություն չի ունենա:


Անտեսնայի հորիզոնական մասը և իշեցումը լավ է պատրաստել ճո-

պանիկի ամբողջ կտորից: Անտեննայի համար չի հանձնարարվում մեկուսացված հաղորդալար գործածել, քանի որ մեկուսացումը մեծացնում է անտեննայի քաշը և դրանով իսկ փոքրացնում է նրա ամրությունը: Մերկ հաղորդալարի կամ ճոպանիկի անբավարար երկարության դեպքում մեկուսացած հաղորդալարը կարելի է զոդել մերկի հետ և օգտագործել այն որպես իշեցում:

Իշեցումը լինում է երկու տիպի՝ ազատ իշեցում (նկ. 12) և հեռացրած իշեցում (նկ. 13): Ազատ իշեցումն ավելի ցանկալի է, քայլ այն միշտ չի կարելի կիրառել, քանի որ այդպիսի իշեցումը պատից երկու մետրից ոչ պակաս հեռավորության վրա պետք է գտնվի: Որպես կանոն, իշեցումը երկու դեպքում էլ թեթև կերպով ձգվում է զեպի կեռը, որը ամրապնդված է պատին կամ պատուհանին ներս տանելու մասին մանրամասն կխոսվի հետագայում:



Նկ. 12 ազատ իշեցումով
արտաքին անտեսնան



Նկ. 13 հեռացրած իշեցումով
անտեսնան


Անտեսնան կայմերից կախվում է մեկուսիչների վրա: Մեկուսիչները լավ կլինի վերցնել ընկույզաձեկ տիպի, անտեսնայի հորիզոնական մասի յուրաքանչյուր ծայրի համար երկուական համար: Մեկուսիչների ճիշտ կապումը ցուց է տրված 12-րդ նկարի վրա: Մեկուսիչների հեռավորությունը նշանակություն չունի. կապելու հարմարության համար այդ հեռավորությունը վերցվում է ոչ պակաս 10—12 սմ:

Իշեցումը սենյակն անցկացնելու մուտքի մոտ գրվում է մի մեկուսիչ: Եթե երկու կայմերը զրվում են մի տանիքի վրա (նկ. 13), հարկ կլինի իշեցումը հեռացնել տանիքի եզրից, պահպանելով այն տանիքի հետ շփկելուց: Այդ իրականացվում է մի ձողի օգնությամբ, որի ծայրին ամրացված է մեկուսիչ կամ ոռլիկ, որին կապված է իշեցումը: Չողը տանիքի վրա ամրացված է մեխանիկը: Չողի ծայրը ցանկալի է երկար անել, երկար ձողը անտեսնային վնասվելուց ավելի լավ է պաշտպանում տանիքի ձյունը մաքրելիս:

Յ-րդ գծագրի վրա (էջ 4) ցուց է տրված մի անտեսնայի սարքավորում, որն ունի կախման մեկ կետ (կենտրոնացված ունակությամբ անտեսնա):

Հակասաղմկային անտեսնաների սարքավորումը համարյա սկզբունքային տարրերություն չունի սովորական արտաքին անտեսնաների սարքավորումից: Սակայն հակասաղմկային անտեսնայի իշեցումը կարելի է պատից ու տանիքից անհամեմատ ավելի մոտ անցկացնել:

Այժմ անցնենք շենքի ներսը տանելու կառուցվածքին: 14-րդ նկարի վրա ցուց է տրված անտեսնայի մուտքը շինության ներսը: Իշեցումը ձգող կեռը ամրացվում է պատուհանի շրջանակի ներքեվի մասին: Որոշ դեպքերում այդ կեռը կարելի է ամրացնել նաև արտաքին պատին: Մեկուսիչը մուտքից մի քիչ ցածր է դրվում այն հաշվով, որ հաղորդալարը հնարավոր լինի մուտքի անցքին մտնեցնել ներքելից: Պատուհանի շրջանակի մեջ դրվում է մի հախճապակյա ձագար, որը մի ծայրում ծոված խողովակ է: Զագարը ամրացվում է արտաքին շրջանակի մեջ պատրաստված անցքում այնպես, որ ծոված ծալը դուրս լինի և դեպի ներքին ուղղված, որպեսզի անձեւի ժամանակ չուրը խողովակի մեջ չանցնի: Ներքին շրջանակի մեջ փորված անցքում դրվում է հախճապակյա խողովակը, եզրիկով դեպի սենյակի ներսը: Շոպանիկը ձագարի և փորբիկ խողովակի միջով անց է կացվում կեմբըրիկյան խողովակի մեջ: Ուղինե խողովակ չպետք է վերցնել, քանի որ նրա մեջ հաղորդալարը օքսիդանում է:



Նկ. 14. անտեսնան շենքի մեջ անցկացնելու սարքավորումը.

Ենքի ներսում հաղորդալարը ողիկների վրայով տարվում է դեպի ամպրոպային փոխարկիչը, որը միացվում է ըստ ստորել 21-րդ նկարի վրա


բերված սխեմաներից մեկի: Փոխարկիչի սեղմակներից դեպի ընդունիչն է դնում երկու մեկուսացրած հաղորդալար, որոնք օժտված են ծարքակալներով կամ երկճանկերով, նայած ինչ է կիրառված տվյալ ընդունիչում: Անտեսնան և հողակցումը դեպի ընդունիչը տանելու համար իբրև հաղորդալար կարելի է վերցնել զանգային շնոր կամ որեվե այլ փափուկ հաղորդալար:

Ծինության մեջ անցկացնելու նույնպես և ամբողջ ներքին սարքավորումը պետք է կատարել խնամքով և գեղեցիկ, որպեսզի սենյակի տեսքը շիշացվի: Ամենից լավ է ընդունիչը տեղափորել հաղորդալարի մուտքի տեղին մուտքի:

Անտեսնայի և հողակցման հաղորդալարը պետք է էլեկտրական լուսավորության լարերից հեռու տանել. ընդունման ժամանակ ավելորդ աղմուկներից խուսափելու համար:

Ամպրոպային փոխարկիչի փոխարեն կարելի է դնել ինքնագործ վարդյակ (քոչեկա) բներով և կայծային միջակալիքներով (պարպիշով): Այսպիսի վարդյակը (նկ. 15) խնամքով կատարելու դեպքում լավ տեսք կունենա: Վարդյակը սարվում է (ամրացվում է) պատի վրա ոռվիկներով, որոնք միաժամանակ օգտագործվում են դեպի վարդյակը տարվող հաղորդալարերը ամրացնելու համար: Բների ստորին գայլաների տակ սեղմակում են ատամնավոր թիթեղներ, որոնք պարպիշներ են: Պարպիշի երկու թիթեղների ատամների միջև սահմանվում է 0,5 մ. մ-ից ոչ ավելի հեռավորություն:

Սենյակային անտեսնան Սենյակային անտեսնայի դրման ամենից ավելի պարզ և ռացիոնալ եղանակը ցուց է տրված 16-րդ նկարում: Պատի մեջ պատուակում են կամ գիպսի վրա ծեփելով ամրացնում փորք կանթեր: Սենյակային անտեսնաների համար կիրառվում է բարակ ձոպանիկ 1,0—1,5 մմ. հատվածքով: Մերկ կամ մեկուսացված հաղորդալար 0,8—1 մմ. տրամագծով: Մեկուսիչները ըստ հնարավորին վերցվում են փոքր չափի՝ սենյա-



Նկ. 15. ինքնաշխն վարդյակ՝ ընդունիչն անտեսնային միացնելու համար.


կային սոլիկների տիպի հաղորդալարը ավելի լավ է տանել պատերից 20—30 մմ հեռավորությամբ, տեղափորելով այն ձգիչների վրա,




Պետք է խուսափել էլեկտրական լուսավորության հաղորդակարերի մուտքավորումից (արդյունաբերական խանգարումների հնարավոր աղբյուրից): Անտեսնայից հաղորդակարը չափ կլինի տանել ոչ թե զեպի ընդունիչը, այլ վարդյակը: Որպես էժան վարդյակ կարելի է օգտագործել այսպես կոչված առաստաղային վարդյակը (նկ. 17), փայտի հիմքով, կամ պատրաստել բներով գեղեցիկ վարդյակ, վերը նկարագրվածի նման (այսպիսի վարդյակում պարզի պետք չե):

6. ՀՈՂԱԿՑՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Ներքին նողակցում. Այն շինություններում, որոնք ունեն ջրմուղ կամ կենտրոնական շեռուցում, հողակցման համար ամենից հարմար է օգտա-



Նկ. 16 սենյակային անտեսնան անցկացնելը



Նկ. 17 առաստաղային վարդյակի օգտագործումը սենյակային անտեսնային համար

գործել այդ սխեմմների խողովակները: Անհրաժեշտ է միայն հաշվի առնել այն, որ վատահելի և լավ հողակցում կլինի միայն այն գեպքում, եթե խողովակներում չուր կա: Հակառակ դեպքում խողովակների կցվածքները, որոնք սարգում են (միացվում են) յուղաներկով (սուրիկ), զգալիորեն մեծացնում են հողակցման դիմագրությունը:

Հողակցումը անցկացվում է նույն հաղորդակարով, ինչ և անտեսնան: Հողակցման հաղորդակարը կարող է նույնպես մեկուացած լինի, բայց նրա կտրվածքը անտեսնայի հաղորդակարի կտրվածքից փոքր չպետք է լինի:

Հողակցման հաղորդակարը ըստ հարավորին պետք է կարծ լինի, ոչ մի գեպքում անտեսնայի հաղորդակարից երկար չպետք է լինի, իսկ փոքր դգայնություն ունեցող ընդունիչների համար— անտեսնայի երկարությունը կեսից ավելի չպետք է լինի:

Հողակցումն անցակցնելիս, պետք է զգուշանալ էլեկտրական լուսավորության հաղորդակարի հարևանությունից նույնպես, ինչպես և անտեսնան անցկացնելիս:

Ընտրելով հողակցման տեղը, հաղորդակարն ամրացնում են խողովակին: Խողովակը խարտոցով մաքրում են մինչև փայլելը, այն փաթաթում են անապաթերթով, իսկ անապաթերթի վրայից, որպեսզի վերշինս չփշրվի, դրում են թիթեղի շերտ (կոնսերվի տուփից): Թիթեղի վրայից երկու երեք անգամ փաթաթում են ճոպանիկը և այնուհետև ճոպանիկն ամուր ուղրում են: Այս գեպքում ստացվում է վատահելի միացում:

Երեմն հողակցման համար կիրառում են հատուկ սեղմակներ: Այդպիսի սեղմակներից մեկը ցույց է տրված 18-րդ նկարի վրա: Այդպիսի սեղմակների տարբերիչ առանձնահատկությունը սրած ծայր ունեցող պողպատի պտուտակն է, որն առանց խողովակի մակերեւությունը մաքրելու վատահելի կոնտակտ է ապահովում: Բացի այդ, խողովակն ընդգրկող պահանգը (ռուբա) օժտված է սուր սեպերով: Հողակցման հաղորդակարը կարելի է սեղմել պըտուտակի գայկայի տակ կամ միացնել շտեկերի օգնությամբ, որը դրվում է պահանգի վրա փորկած անցքի մեջ:

Արտաքին նողակցումը— կարելի է իրականացնել մի քանի եղանակներով: 19-րդ նկարի վրա ցույց է տրված հողակցման երեք տարբեր վարիանտ: Թիթեղի փոխարեն կարելի է օգտագործել հին երկաթի, չներկված, կլայեկած կամ ցինկապատված դուրը, երկաթե տաշտ և այլն: Երկաթին զոդում են հողակցման հաղորդակարը:


Հողակցումը լավ է կլինի այն գեպքում, եթե երկաթե թիթեղը, խողովակն և այլն գտնվում են խոնավ հողում: Առանձնապես հանձնարարվում է հողակցող սարքը թաղել գետնաշղերի մակարդակից ցածր:

Հատկապես լավ է հողակցման համար կիրառել գազային խողովակը: Խողովակի ներքեվի ծայրը փակում են փայտի խցանով, իսկ խողովակի պատերը շատ տեղերում ծակում են: Վերեկի բաց ծայրից ժամանակ առ ժամանակ չուր են լցնում, որի շնորհիվ խողովակի շուրջը հողը մշտապես խոնավ է մնում:


Հողի հաղորդականությունը մեծացնելու համար հողակցման հորի մեջ օպտակար է մանր ծեծած կոքս կամ փայտածուխ ցանել, որը պետք է 2փշի հողակցող թիթեղի հետ:

Բոլոր վերն ասածը վերաբերում է լավ հողակցում սարքավորելուն, որը նվազագույն դիմագրություն է տալիս:

Սակայն միշտ պետք չի լինում այդպիսի հողակցում։ Միշտ անտեսնային կառուցվածքի դեպքում ընդունման որակը լավ հողակցումից չի շահում։ Աւտի վատ անտեսնայի դեպքում ամենապրիմիտիվ հողակցումն էլ բավական է։ Ցանցային ընդունիչներում հողակցման դերը կարող է խաղալ ինքը, էլեկտրացանցը, որը միացված է հաղորդիչին ուժային տրանսֆորմատորի գալարների ունակությունով։



Նկ. 18 հողակցման սեղմակը



Նկ. 19 հողակցման սարքավորման
եղանակները

100 մմ.-անոց մեխը, որի գլխիկի մոտ փաթաթված է ընդունիչից եկող հաղորդավարը, խոնավ հողի դեպքում լավ հողակցում է՝ շարժական ընդունիչների և նման սարքերի համար, որոնք նախատեսնվում են ժամանակավոր աշխատանքի համար։ Նման հողակցում հեշտ է իրականացնել դանակի, պատառաքաղի, պտուտակաղարձի միջոցով և այլն։


Քարքարոտ և ավագութ չոր հողի գեպքում լավ հողակցում պատրաստելը հնարավոր չէ, քանի որ հողը տվյալ գեպքում մեկուաիշ կլինի: Այստեղ ավագույն արդյունքներ է տալիս հակակշիռը, որը բաղկացած է անտեննացի տակը մեկուաիշների վրա ձգված մեկ կամ մի քանի հաղորդայարերից:

7. ԿԱՅՄԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Կայմերը պատրաստվում են փայտից և 3—4 մ. բարձրություն ունեն 6—8 սմ հաստության (մեջտեղում) դեպքում:

Կայմը պետք է հարթ սանդել, իսկ գագաթը սրել: Օգտակար է կայմը ներկել յուղաներկով, այդ դեպքում այն քիչ ենթակա կլիխնի փորձանն և երկար կկանգնի: Կայմի հաստատումը պուզ է տրված 20-րդ նկառում:

Կայմը դրվում է Հենաբանի (Շիմքի) վրա, որը պատրաստվում է փայտի կոճղիկներից: Կոճղիկները պետք է թեքություն ունենան, որպեսզի մի կողմից կտուրի վրա դրվելիս մյուս կողմով հորիզոնական դիրք ստանան: Կոճղիկների վրա դրվում է տախտակի մի կտոր, իսկ նրանից վերև՝ բռն կայմի համար, բնի բացվածքը ունի կայմի ներքեվի ծայրի տրամագիծը: Բռնը նույնպես տախտակից են պատրաստում: Կոճղիկներն ու տախտակները կտորի ծպիշներին կարակցվում են խոշոր մեխերով:



Նկ. 20 կայմի սարքակումբ

Կայմը ուղղաձիգ դրության մեջ պահում է նրա վերկի ծայրին ամրացված ձփշներով: Հանձնարարվում է կայմը ամրացնել իրար հետ 120 աստիճան անկուն կազմող երեք ձփշներով: Ձփշներից մեկը, որը կռվում է գլխավոր ձփշը, գտնվում է անտեխնայի հարթության մեջ և հավասարակշռում է նրա ձգումը: Մյուս երկու ձփշները կայմը պահում են անտեխնային ուղղաձայաց ուղղությամբ ընկնելուց:

Կայմի ձգիչները ամենից լավ կլինի պատրաստել 3—4 մմ հաստությամբ երկաթալարից, կամ 2—3 մմ. տրամագծով պողպատե ճոպանիկից:


Զգիշների համար կանեփի պարան չպետք է գործածել, քանի որ այն անձրևի ժամանակ ձգվում է և չոր եղանակին թուլանում է. ձգվելով այն կարող է կոտրել կայմը կամ կտրել ճռպանները:

Շատ կարեվոր է ձգիչները կանոնավոր ամրացնել, քանի որ անփուլթ ամրացումը կարող է կտուրը փշացնել և կաթիլք առաջացնել:

Դրա համար ամենից լավ է կիրառել այսպես կոչված խլիկներ՝ զուգորդված երկաթյա շերտերից պատրաստված դինդերի հետ։ Խլիկ կոչվում

Էն վեցամիստ գաղաթուի այն պատուակները, որոնք պատրաստված են փայտի համար: Գինդերը պատրաստում են 2—3 միլիմետրանոց երկաթալարերի կտորներից, որոնք երկու տեղում ժակված են խլիկների տրամագծի չափով: Մի անգքի միջոցով գինդը սեղմվում է խլիկի տակ: Մյուս անցքին ամրացվում է ծպիչը (եռքաշը): Զգիշի ամրությունը շնամատելու համար, նրան պիտի նույր եղրի մոտ ծուելիս, այն պետք է գինդին ամրացնել նույր երկաթի շորդանի (տեղ) միջոցով, որը ծոված է սրայեցր օղակի ձևով:

Զորդանը հաստափում է գինդի բացվածքում, իսկ նրա շուրջը փաթթվում ձգիչը: Զորդանը հատկապես ցանկալի է կիրառել ճոպաններից պատրաստած ձգիչների դեպքում:



Եկ. 21 Ամպրովագիռիստրեկիչի և պարագիչի միաբանում

Քանի որ ամեն ժամանակ հնարավոր չելիկներ ձեռք բերել, ապա ծայրահեղ դեպքում ձգիչները կարելի է կապել բեկներին (գամերին) (նկ. 20):

Բեվեռները խփելիս կամ խլիկները պտուտակելիս պետք է միջոցներ ձեռք առնել կտուրը չփշացնելու համար։ Դրա համար նախ, բոլոր ամրացումները կատարվում են ծափիլների վրա։ մեխերը կամ բեվեռները չի կարելի խփել կավարածածկին (օբրեթերա)։ Երկրորդ, ամրացման բոլոր տեղերը ներկվում են յուղաներկով, իսկ խլիկների տակը դրվում է կանեփաթել (կամ ճղճղված պարան) սուրիկով։

2-2,5 մետր բարձրություն ունեցող կայմերը կարելի է անմիջականութեն ամրացնել ծխնելուզգին, ինչպես այդ ցույց է տրված 22-րդ նկարի վրա։ 2 մետրանոց կայմի հաստությունը վերցվում է 5 սմ.։

Անտեննան բարձրացնելու համար (նկ. 20) կայմի վերևի ծայրին կապում են մի ճախարակ: Ճախարակի փոխարեն կարելի է օգտագործել անտեննային մեկուսիչը:

Իբրև անտեննայի ձգիչ ամենից լավ է վերցնել պողպատե տրոս՝ անտեննայի կտրվածքին հավասար կամ նրանից մի քիչ փոքր կտրվածքով։ Այդ նպատակի համար կարելի է օգտագործել նաև անտեննային ճռպանիկը։ Անտեննայի ձգիչը կտավում է կայլմին։

վերը (նկ. 15): Պարզիշի սուր ծալքերի հեռավորությունը վերցվում է 0,5 մմ.-ից ոչ ավել:

Գյուղական պայմաններում ամպրոպից պաշտպաններու համար պետք է կիրառել փակ տիպի պարպիչ, որը տեղավորվում է շինության դրսի կողմանց այնպես, որ հաղորդավարերը անտեննալից գեպի պարպիչը գնան որբան կարելի է առանց ծոռամների:

Անհրաժեշտ է համուկապես ընդգծել, որ ամպրոպափոխարկիլը կամ պարպիջը իր գերը կկատարի միայն լավ հողացկման դեպքում:

Սենյակալին տիպի պարպիչ կարող է լինել նույնպես սովորական ազդանշանային նեռնյան լամպը։ Անտեննայի վրա լարումը բարձրանալու գեպքում նեռնյան լամպով հոսանք կանցնի, և անտեննան կպարպի։ Այդ դեպքում՝ լամպը կլուածվորվի, ազդանշանելով, որ անտեննան գտնվում է լարման տակ և նրան կպչելն անվտանգ չէ։



А. ШЕВЦОВ
ЛЮБИТЕЛЬСКИЕ ПРИЕМНЫЕ
АНТЕННЫ

(На армянском языке)

Պատ. Խմբագիր՝ ԶՈՒՅՆՅԱՆ
Դիւտանելիթիկական Խմբագիր՝ Հ. ՀՕՎՃԱՆՅԻ
Թարգմանիչ՝ ԱՐԱ. ԽԱՆՉՅԱՆ
Տես. Խմբագիր՝ Արքագիրէ՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

4,3 3364

Թարտիֆեր N. 1066: Տեղադր. 1000 թ.

Հանձնված Ու արտադրության 6/XII 1940

Инструкция: Картинка на 6/II 1941 г.

Հեղինակացին 1½ մատուց : Տպառութեալ

длительное время.

Digitized by srujanika@gmail.com

Հայկական ՍՍՌ Ժողկումսովետին


Հայկական ՍՍՌ ժողովածութեան կից քօրրեղի և ամեառելին լուսաւում էր առաջ

Անտեննան կախելիս չի կարելի այն շափաղանց ուժեղ ծփել, քանի որ
ուժեղ քամու կամ սառցակալելու ժամանակ նա կարող է կտրվել:

8. ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՄՊՐՈՊԻՑ

Ընդունիչների աշխատանքի պրակտիկան ցույց է տալիս, որ կայծակը
անտեննային շատ հազվադեպ է խփում: Ուստի հիմք չկա մտածելու (հն-
պես այդ երբեմն լինում է), որ անտեննան «ձգում է կայծակին»:

Սակայն միշտ պետք է որոշ միջոցներ ձեռք առնել, որոնք ոչ թե պահ-
պանում են կայծակի ուղղակի անտեննային խփելուց, որը բացառապես հազ-
արդեպ է լինում, այլ այն վտանգներից, որոնք կապված են ամպրոպի ժա-
մանակ ինդուկցիայի հետևվանքով անտեննայի մեջ առաջացող զգալի լու-
րումների հետ: Այդ լարումները կարող են ոչ միայն կայծ առաջացնել, որը
լուսանգավոր է հրդեհի տեսակետից, այլ և կարող են էլեկտրական հարվածի
պատճառ դառնալ անտեննայի հաղորդակարին կպչելիս:



Նկ. 22 կայծի ամբացումը

Անտեննան օժտում են ամպրոպափոխարկիչով կամ կայծային միջա-
կայքով (պարպիչով), իսկ երբեմն թե մեկով ե թե մյուսով:

Ընդունումը վերջացնելիս նույնպես և ամպրոպը մոտենալիս անտեննան
ամպրոպային փոխարկիչով հողակցում են:

Ավելի հարմար է ամպրոպային միջակայքը (պարպիչը), որը մտցվում
է անտեննայի և հողակցման միջև: Այն գործում է ավտոմատիկորեն. ան-
տեննայում լարման բարձրանալու դեպքում պարպիչի էլեկտրոդների միջև
կայծ է թողնում, գրանով իսկ պարպելով անտեննան:

21-րդ նկարի վրա ցույց են տրված ամպրոպափոխարկիչի և պարպիչի
(որը նկարների վրա նշանակված է P տառով) միացման տարածված ախ-
մաները: Պարպիչը կարող է պատրաստվել այնպես, ինչպես բացատրվեց



9839